Մեր ժողովրդական-
ները

891.99
Մ-80

891.99
Մ-80

6 NOV 2011

ԵՐ. ՄԿՐՏԻՉԵԱՆ

# ՄԵՐ ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐԸ

(ԲԱՐՈՅԱԼԻՑ ԶԱՒԵՇՏ ՄԷԿ ԱՐԱՐ)



ԵՐՈՒԱՆԴ ՄԿՐՏԻՉԵԱՆ

891.99
Մ-80

Կահիրէ, 1920.

03 JUL 2013

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Պիտի խնդրէի որ ներկայ «բիէս»ը բեմադրողները շատ ուշադիր ըլլան դերակատարներու ընտրութեանց մէջ եւ անոնց պատշաճեցման՝ «բիէս»ին մէջ երեւցող անձերու առանձին ու ճշգրիտ հոգեբանութեանց հետ։

Եթէ հոգ չի տարուի մեր այս թելադրութեանց, կասկած չկայ որ «բիէս»էն սպասուած յաջողութիւնը խնդրոյ առարկայ կրնայ ըլլալ։

ՀԵՂԻՆԱԿԸ

Ս. Գ. ՀՆՁԱԿԵԱՆ
ԳԱՀԻՐԷ 1915

4395-78

## ԱՆՁԻՆՔ

| | | |
|---|---|---|
| *ՓՈՂՋՈՒՆԻ* . . . | Ատենապետ . . . | *Ռուսահայ* . . |
| *ԲԻԷՌ* . . . . . . | Ատենադպիր . . | *Ֆրանսահայ* . . |
| *ԺՕՆ* . . . . . . | Գանձապահ . . | *Անգլիահայ* . . |
| *ԹԸՆԿԸՌԻԿ* . . . | Կնքապահ . . . | *Ակնահայ* . . . |
| *ՍՐԱՊԻՈՆ* . . . . | Խորհրդական . . | *Պոլսահայ* . . |
| *ԵՈՒՍՈՒՖ* . . . . | Խումբի անդամ . | *Եգիպտահայ* . . |
| *ՄԻՋՕ* . . . . . . | Սրնեփ . . . . | *Հայ-Հոռոմ* . . |

**(Տեսարանը կը ներկայացնէ սրճարանի մը մասնաւոր սենեակը, որուն աջ կողմի դուռնէն ժողովականները կը մտնեն եւ մէջտեղի դուռնէն Միջօն։**

## ՏԵՍԻԼ Ա.

*ԲԻԷՌ*.— (Ձեռքին մէջ տետրակ մը, թեթեւսոլիկ շարժումներով ու հապճեպով ներս կը մտնէ։ Չորս կողմը ակնարկ մը նետելէ վերջ թեւի ժամացոյցին կը նայի, յուսահատած տետրակը սեղանին վրայ կը դնէ, եւ թաշկինակով քրտինքը սրբելով մօտ կու գայ).— *Ճիշդ ընդհանուր ժողովի որոշուած ատենն է, նորէն մեր հաւագախումբի անդամները չեն եկած։ Ասոր կ'ըսեն Եգիպտահայ ճշդապահութիւն։ Ապուշ մէկն եմ եղեր որ աճապարեցի եւ ճաշելու համար տուն ալ չի գացի։* (Մտածկոտ) *Հիմայ Եգիպտահայ ճշդապահութեան չի*

ճաշակելու համար, իբրև պատիժ քանի մը ժամ սպասելու է։ Բայց բոլորովին անօթի փորով ալ անկարելի է սպասել։ Գոնէ մէկ երկու գաւաթ գարեջուր խմեմ, այսպէս, մինչև ժողովին վերջը ստամոքսիս հետ համաձայնած կ'ըլլամ։ (Սրճեփը կանչելու համար ձեռքերը իրար կը զարնէ).

ՄԻՋՕ (Կը մտնէ, անձեռոցով սեղանը մաքրելով) Հրամեցէ՛ք։

ԲԻԷՌ.— Գարեջուր մը բե՛ր։

ՄԻՋՕ. Լաւ (մեկնելու կ'ըլլայ)։

ԲԻԷՌ.— Ինծի՛ նայէ, այսօր ժողով պիտի ունենանք։

ՄԻՋՕ.— Այսինքն գրիչ, կաղամար եւա՞յլն բերեմ։

ԲԻԷՌ.— Այո՛։

ՄԻՋՕ.— Անմիջապէս (կը մեկնի)։

ԲԻԷՌ (Կը նստի արհամարհանօք).— Կարծես թէ Բարիզէն հոս եկած ըլլայի մեր «փանփառ»ի փորձանք անդամներուն հետ ժողովները գարեջուրով սկսելու։

## ՏԵՍԻԼ Բ.

ԲԻԷՌ ԵՒ ՓՈՂՋՈՒՆԻ

ՓՈՂՋ. (Գլխարկը կը բարձրացնէ, խրոխտաբար խօսելով).— Պարև, Պարոն Սանտոպյան։

ԲԻԷՌ (Ոտքի ելլելով ձեռքը կը սղմէ).— Բարե՛ւ, Պ. Սանտոպյան, ինչպէ՞ս էք։

ՓՈՂՋ.— Լաւ եմ, խնդրում եմ, նստեցէ՛ք։ (Հեգնական) Մեր երաժշտասէր ընկերներ նորի՞ց չեն եկել։

ԲԻԷՌ.— Ո՛չ։

ՓՈՂՋ. (Ցաւագին).— Ուղարկուած վերջնական հրաւիրագիրներն էլ օգուտ չարե՞ց նրանց վրայ։



ԲԻԷՌ.— Ընկեր Սրապիոնը արդէն ըսաւ...

ՓՈՂՋ. (Նստելով).— Ի՞նչ ասաց։

ԲԻԷՌ.— Ըսաւ որ մեր ընկերները առաջին ընդհանուր ժողովին աշխատանքի բաժինը դժուարացուցին իրենց անձնական գործերը պատրուակելով, երկրորդին՝ ճշդապահ չեղան, երրորդին՝ անդամներուն կէսը միայն ներկայ գտնուեցաւ և միւս կէսին՝ գրաւոր ձայները գրպանած. չորրորդ ժողովին հաւանական է որ բնաւ չի մասնակցին։

ՓՈՂՋ.— Ա՜խ, եթէ Կովկասից եկած ատենս տեղեակ լինէի այս սովորութիւններին, նրանց չէի գործակցում, ո՛չ մի պարագայում։

ԲԻԷՌ.— Մի՞թէ ես կը գործակցէի։ Բարիզէն հոս եկած օրս երբ ամէնը մէկ մեծ խանդավառութեամբ չուրջս հաւաքուեցան և նուագախումբ մը կազմելու առաջարկ բերին, իբրև երաժշտասէր, մասնակցութիւննիս խոստացանք։ Ի՞նչ գիտնայինք, ,ևս չէին որ հոտաւըտայինք...

ՓՈՂՋ.— Ցաւում եմ որ ընկերութիւնը պիտի կազմալուծուի և բարեկամներ մեր վրայ պիտի ծիծաղին. արդէն սրանից մի շաբաթ առաջ մէկն ասում էր ինձ՝ «էս քաղաքում անհնարին է գլուխ հանել ոևէ մի գործ»։ Իսկ ես դրան հակառակն էի պնդում։

ԲԻԷՌ.— Ես ալ կը ցաւիմ որ ընկերութիւնը կազմալուծուելով հասարակութիւնը և մենք նուագախումբէն կը զրկուինք։

ՄԻՋՕ (Գարեջուրն ու ժողովի վերաբերեալ առարկաները բերելով).— Հրամեցէ՛ք։

ԲԻԷՌ (Միջօին կը վճարէ)։

ՓՈՂՋ.— Ուզում եմ պաքսիմաթով մի թէյ առնել։

ՄԻՋՕ.— Շատ լաւ. (Մեկնելու կ'ըլլայ, բայց Ձօ-ճին մտնելը տեսնելով կ'սպասէ, որպէսզի անոր հրահանգները լսէ, ու սովորական ձեւակերպութիւններով պատուը կուտայ)

# ՏԵՍԻԼ Գ.

## ՆՈՅՆՔ ԵՒ ԺՕՆ

ԺՕՆ (Ձեռքին մէջ ճանճավան ու լրագիր, անգլիական շարժուձեւերով, ժեստերով եւ ծխելով).— Բարեւ ձեզ։

ԱՄԷՆՔԸ.— Աստուծոյ բարին, պարոն Գանձապետ։

ԺՕՆ (Հեգնական).— Դեռ կանո՞ւխ է։

ԲԻԷՌ.— Ըստ Եգիպտահայ ժամագրութեան։

ԺՕՆ.— Կրկին փորձելը յիմարութիւն է կ՚ըսեն, բայց ես Գահիրէի մէջ երրորդ անգամ ըլլալով նուագախումբեր կազմակերպելու փորձանքին մէջ կը գըտնըւիմ. (խօսքը ետ առնելով) Ը՜հ, փորձին մէջ կը գտնուիմ, ասոր ի՞նչ կ՚ըսեն։

ՓՈՂԶ. (Հեգնական).— Նուագախրութիւն։

ԺՕՆ.— Միջօ՛, ինծի վիսքի մը բեր։

ՄԻՋՕ.— Անմիջապէս. (կը մեկնի)։

ԲԻԷՌ (Մտածման մէջ).— Տղայք, կարելի չէ՞ պարտաճանաչութիւնը գնահատելով այս նուագախումբին կացութիւնը փրկել։

ԺՕՆ.— Ի՞նչով կրնանք գնահատել։

ԲԻԷՌ.— Կորոններով.

ՓՈՂԶ.— Ծխավաճառներու՞ կորոններով։

ԲԻԷՌ.— Մասնաւոր կորոններով։

ՓՈՂԶ.— Այդ կորոններու փոխարէն ի՞նչ պէտք է տալ։

ԲԻԷՌ.— Որոշ կորոններու փոխարէն որոշ նուէրներ։

ԺՕՆ.— Ինչպէս որ մեր մանկութեան ատեն դասատուները մեզի բարենիշ կուտային... այնպէս չէ՞...

ԲԻԷՌ.— Գրեթէ։

ԺՕՆ (Մերթ ընդ մերթ ճանճ վռնտելով).— Բայց անոնց նուէր տալու համար նիւթականի պէտք կայ, մինչդեռ մենք պէտք ունինք ատոր։



ԲԻԷՌ.— Է՜հ, այո՛, մենք պէտք ունինք ատոր։ Ուրեմն բան մը մտածել, միջոց մը խորհիլ ու հայթայթել նիւթականը։

ԺՕՆ.— Ես ալ կը մտածեմ որ պէտք չէ ձեռքերը ծալլուած նստիլ, չիտակ է, բայց ի՞նչ կրնանք ընել։

ԲԻԷՌ.— Ըլլա՞ր որ այս մասին հայ ազնուականներուն դիմում ընենք։

ԺՕՆ.— Ի՞նչ ձեւի տակ դիմում ընելու է։

ԲԻԷՌ.— Մտածելու ի՞նչ կայ. մեր նպատակը մէջտեղն է արդէն, հայ երաժշտութիւնը զարգացնելու նպատակը։

ԺՕՆ.— Հը՛մ... շատ դիւրին պիտի ըլլար այդ, եթէ հայ երաժշտութեամբ հետաքրքրուէին, այն ատեն պիտի ուզէին օգնել։

ԲԻԷՌ.— Ի՜նչ... կը կասկածի՞ս ուրեմն։

ԺՕՆ.— Ես վստահ եմ թէ անոնք վայրկեան մը իսկ հետաքրքրուած չունին մեզմով։

ԲԻԷՌ.— Ուրեմն ինչո՞վ կը հետաքրքրուին։

ԺՕՆ.— Եւրոպական երաժշտութիւնով։

ԲԻԷՌ.— Զարմանալի՛. Բարիզի մէջ ֆրանսացի ազնուականներն անգամ հայ երաժշտութեամբ կը հետաքրքրուին։

ՓՈՂԶ.— Կովկասում էր Ռուսները էդպէս են անում։

ԺՕՆ.— Որովհետեւ անոնց մէջ երաժշտութեան ճաշակը զարգացած է, իսկ մերիններուն մէջ՝ օտարամոլութեան։

ԲԻԷՌ.— Ջոջերուն գիտենք նէ ի՞նչպէս կ՚ըլլայ։

ԺՕՆ.— Ջոջերը միայն հաճոյք կ՚զգան թրքօ-արաբական ճաշակով ֆոնօկրաֆէ։

ՄԻՋՕ (Թէյն ու վիսքին կը բերէ)

ՓՈՂԶ. (Շաքարի կտոր մը բերանը դնելով կը ծծէ, թէյն ալ վրայէն կը խմէ)

ԲԻԷԹ.— Իսկ եթէ միջին դասակարգին դիմենք։

ԺՕՆ (Միջօին վճարելով).— Կը վռնտուինք։

ՄԻՋՕ (Կը մեկնի)։

ԲԻԷԹ (Հեգնական).— Կ'երեւի թէ անոնք ալ պէռպէռիներու երաժշտութեամբ կը հետաքրքրուին։

ԺՕՆ.— Հայկական երաժշտութեամբ կը հետաքրքրուին, նիւթապէս կը քաջալերին ու կը փափաքին որ նուագախումբ մըն ալ ունենան, բայց...

ԲԻԷԹ.— Բայց ի՞նչ..

ԺՕՆ.— Բայց որովհետեւ անոնք մեր նուագախումբէն առաջ ունեցած են երկու նուագախումբեր եւս, զորս նիւթապէս քաջալերած ըլլալով հանդերձ... գործը գլուխ չեն կրցած հանել...

ՓՈՂՁ.— Պարոն Ժօն, տու ի՞նչ ես խորհում նուագախումբի յաջողութեան համար։

ԺՕՆ.— Այնքան խորհեցայ որ գիշերներն անգամ սկսայ նուագախումբի վերաբերեալ երազներ տեսնել, եւ յաջողութիւնը միայն երէկ գիշերուան տեսած երազիս մէջ գտայ։

ԲԻԷԹ.— Բարին ըլլայ, պատմէ՛ տեսնանք։

ԺՕՆ.— Մեզմէ հինգ հոգի հին չէնքի մը մէջէն ամանով մը ոսկի գտանք։ Այդ դրամով ընկերութեան պէտքերը հոգացինք։ Երեք տարուան պայմանաժամով երաժշտապետ մը վարձեցինք եւ ընկերներու ամսական 10 ոսկի յատկացուցինք։ Քիչ ատենուան մէջ այնքան լաւ յաջողեցանք որ Օթէլ Գօնթինանթալէն եկած մասնաւոր հրաւիրագրի մը համաձայն, գացինք հոն գօնթէյներու ներկայութեան նուագեցինք, որոնց գնահատանքին արժանանալով ծաղկեփունջերու եւ նիւթական մեծ նուէրներու արժանացանք։

ԲԻԷԹ.— Յետո՞յ։

ԺՕՆ.— Քունէս արթնցայ։

ԲԻԷԹ (Հեգնական).— Վրադ բաց ես պառկեր։

ՓՈՂՁ.— Էլլ՛, ֆուլ շատ ես կերեր։



## ՏԵՍԻԼ Դ.

### ՆՈՅՆՔ ԵՒ ՄՐԱՊԻՈՆ

ՄՐԱՊ. (Ձեռքը հեծելանիւի լապտեր մը ու մարելով ներս կը մտնէ, բարձրաձայն).— Միջօ՛, ինծի կլկլակ եւ սուրճ բեր։

ՄԻՋՕ (Ներսէն բարձրաձայն).— Կուգա՛յ կոր։

ՄՐԱՊ. (Տանկական բարեւով).— Բարեւ ձեզ։

ԱՄԷՆՔԸ.— Աստուծոյ բարին։

ԲԻԷԹ (Հեգնական).— Պարոն խորհրդական, ի՞նչ է այդ լապտերը, անդամնե՞րը կը փնտռես։

ՄՐԱՊ. (Լապտերը սեղանին վրայ դնելով կը նստի). — Ուշ չմնալու համար ընկերներէս մէկէն պիսիքլէթ մը առի եկայ։

ԲԻԷԹ.— Ներողութիւն, քովդ միայն լապտեր մը տեսնելուս համար սխալեցայ։

ՄՐԱՊ.— Պիսիքլէթը դուրսն է, լապտերը հետս բերի որ չի կողնան։

ՓՈՂՁ.— Պարոն խորհրդական, խումբի մասին ի՞նչ ես խորհել։

ՄՐԱՊ.— Շատ պաներ, նոյնիսկ ճամբան պիսիքլէթով եկած ատենս անչափ միտքս զբաղուած էր որ քիչ մնաց օթոմօպիլի մը վրայ կ'ելլայի կոր... բայց ապարդիւն։ Դուք ի՞նչ խորհեցաք։

ՓՈՂՁ.— Մենք էլ չի կարողացանք մի եզրակացութեան յանգել։

ԺՕՆ.— Միւս անդամներուն գալուստին սպասելու է։

ՓՈՂՁ.— Իսկ եթէ նրանք չգան։

ՄՐԱՊ. (անտարբեր). —Ուրիշ անգամ մենք ալ չենք գար։

(Կը խնդան)

## ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ ԵՒ ԹՌՆԿԹԻԿ ([redacted])

ԹՌՆԿ. (Մէկ ձեռքը համրիչ, միւսը հովանոց, հազիւ թէ մտած, բարձրաձայն).— *Մէնջուկ չան տղայ, գէօրըդ կոյր, կորկոտ թափի, տը տեղէն հանգստապատառ մի բեր* (ոտնամանները հանելով աթոռի մը վրայ ծալլապատիկ կը նստի).

ՄԻՋՕ (Դուրսէն).— *Անմիջապէ՜ս.*

ԹՌՆԿԹ.—*Բարի իրիկուն, Պ. Փողչունի, ի՞նչպէս էք.*

ՓՈՂՉ.—*Աստուծոյ բարին, Պ. Թնկռիկ, էլիլա եմ.*

ԹՌՆԿ.—*Բարի իրիկուն, Պ. Սրապիոն, ի՞նչպէս էք.*

ՍՐԱՊ.— *Աստուծոյ բարին, աղէկ եմ.*

ԹՆԿԹ.— *Բարի իրիկուն, Պ. Ճօն, ի՞նչպէս էք.*

ՃՕՆ.— *Աստուծոյ բարին, աղէկ եմ.*

ԹՆԿԹ.— *Բարի իրիկուն, Պ. Բիէռ, ի՞նչպէս էք.*

ԲԻԷՌ (Գլխարկը գլուխը դնելով մեկնիլ կը ձեւացնէ).— *Աղէկ եմ, գիշեր բարի.* (Կը խնդան).

ԹՆԿԹ (Ապշած).— *Ժօղվօնքը լուծուեցա՞ւ.*

ԲԻԷՌ (Ժամացոյցը Թնկռիկին աչքին մօտեցնելով, հեգնական).— *Դեռ ժամ մը կայ ժողովը սկսելու.*

ՃՕՆ.— *Պ. կնքապահ, միթէ ժամադրութիւնդ մոռցա՞ր.*

ԹՆԿԹ.— *Ճաշ կ'անէի, դատարկ մէրդուն մէյն էկաւ, փօլըթըքայի վըրայօք խօսքի բռնուեցանք.*

ԲԻԷՌ.— *Հիմա ալ հանգստապատառով մը ճաշդ պիտի ամբողջացնե՞ս.*

ՃՕՆ (Հեգնական).— *Ուրեմն սպասենք որ պարոն կնքապահը նախ հանգստապատառին խօսք հասկցնէ, յետոյ մեզի.*

ԹՆԿԹ (Անտարբեր).— *Ըմմէն օր ըյծին ագին վէրօք կ'ըլլի, օր մ'ալ թող օչխարին ագին վէրօք ըլլի.*



ՓՈՂ. (Խնդուքը զսպելու համար սեղանին վրայի զանգակը կը հնչեցնէ).— *Պ. Թնկռիկ, բոլոր ընկերների հրաւիրագրերը ժամանակին նրանց հասցէին յանձնե՞լ ես.*

ԹՆԿԹ.— *Հրամանք է. Էվ իրիսմէ խունդիրք արի օր աս իրիկուան ժողովքին ներկայ ըլլին անպատճառ.*

ՓՈՂ.— *Եւ նրանք հակառակն են իմացել, ընկերները ոգեւորելու մասին ի՞նչ ես խօրհել.*

ԹՆԿԹ.— *Ա՛լ ադ մարդկանցը վրայօք բան մ'ալ չեմ խօրհիր.*

ՃՕՆ.—*Քիչ մ'ալ սպասենք, գուցէ մէկ երկուքը գան.*

ԲԻԷՌ.— *Սպասելը ինծի շատ անտանելի կը թուի.*

ՃՕՆ.— *Պ. Թնկռիկը մեզի հայրենիքի երգ մը կ'երգէ և շատ տանելի կը թուի.*

ՓՈՂ.— *Բայց մենք ընկերութեան վիճակի մասին ենք ցաւում, երգելը հակառակ կը թուի նրան.*

ՃՕՆ.— *Ցաւելէն օգուտ չկայ, գէթ պարապ ժամանակնիս ուրախ անցընենք.*

ԲԻԷՌ.— *Այո՛, ցաւելէն օգուտ չկայ, գէթ Թնկըռիկը վայելենք.*

ՓՈՂ.— *Ուրեմն Պ. Թնկռիկ քո սոխակի ձայնով մի երգ երգիր.*

ԹՆԿԹ.— *Թէ որ էսէլ Բիէռը վալս մը անէ էվ, էտքն ալ Ճօնը անգլերէն երգ մը անէ նը, ծառայականս ալ երգ մը կ'սեմ.*

ԲԻԷՌ.— *Լաւ, վալս մը պիտի խաղամ* (աթոռ մը կ'առնէ կը խաղայ).

ՄԻՋՕ (Վալսի միջոցին պարելով կը մտնէ՝ կլկլակը, սուրճը եւ հանգստապատառը հետը բերելով).

ՓՈՂ.— *Ինծի մի թէյ բեր.*

ՄԻՋՕ.— *Շատ լաւ* (պարապ սպասները կ'առնէ եւ պարելով կը մեկնի).

ԲԻԷՌ (Վալսը աւարտած).— *Գո՞հ էք.*

ԱՄԷՆՔԸ (Ծափահարելով).— *Կեցցէ՛ Պ. Բիէռը.*

ԹՆԿԹ.— *Հիմայիկս երգ մ'ալ պիտի ասէ իր մօրիկ ոտինք.*

ՃՕՆ.— *Ամենայն սիրով* (կ'երգէ).



Այ օփթըն վօնարը հուայ այ լաւ եու էգ այ տու
էնա նավ լիթ սիմս անէթ, օլ մայ արիմս ար օլ օֆ եու
Եու եուստ թու պի սըմ նայս գու մի ին աէյս կօն պայ
Գան անէթ, իթ սըմս չէյնճդ սէյմ գու մի, այ ֆօնար հուայ
Եու գօլտ մի պէյպի սօլէ էյըր էկօ
Եու թօլտ մի այ վազ վէրի նայս թու նօ
Այ սուն լըրնթ հուաթ լավ վազ, այ թհօթ այ նու
Գաթ օլ տնը թայմ եու օնլի թօթ մի հավ թու լըվ եու։
Եու թօլտ մի տնէթ եու լըվտ մի ինըրըլթըրն
Տօնթ թէլ մի եու վըր ֆուլինկ էֆթըր օլ
Ֆօր իֆ եու կօ էվէյ, եու վիլ պի սօրի սըմտէյ
Եու լէֆթ պինայնտ է պրօքըն տօլ։

ԱՄԷՆՔԸ (Ծափահարելով).— Կեցցէ՛ Պ. Ճօնը։
ՃՕՆ.— Գո՞հ ես, Պ. Թնկռիկ։
ԹՆԿՌ.— Հուրամանքէ։
ՃՕՆ.— Ուրեմն երգէ։





ԹՆԿՌ.— Գիշեր ցերեկ դլուխ չես ելներ մտացս,
Գլուխս որ բարձը դնեմ կերգաս երազս.
Արդեօք որ օրըն՞ էնէմ փափաքս,
Աշխէրքիս չեմ փոխեր սիրտիս սիրածը։

ԱՄԷՆՔԸ (Ծափահարելով)։— Ապրի՛ Թնկռիկը։

ՄԻՋՕ (Թեյը կը բերէ եւ կը մեկնի)։

ՓՈՂ. (Ժամացոյցին նայելով).— Տղերք, վերջացըրէք, հէնց ես համոզված եմ թէ էսօր ընդհանուր ժողով չպիտի կարենանք անել։

ԲԻԷՌ.— Մենք ալ վարչական ժողով կ'ընենք։

ԹՆԿՌ.—Վերջիւթենէն ալ երկու փէօքի պէկէս էն։

ԲԻԷՌ.— Բաւ է որ (իրենց վարչական պաշտօնեաները մատնանշելով) կնքապահ, խորհրդական, ատենապետ, ատենադպիր, գանձապահ ներկայ ենք։

ՍՐԱՊ (Գրպանէն թուղթեր հանելով).— Ժողով ընելէ առաջ, նայինք որ մերին քով քանի՞ ծան կայ և դուրսը քանի՞ անդամներ կը մնան։

ԲԻԷՌ.— Իմ քով երկու ձայն կայ. (գրպանէն թուղթեր հանելով)։

ՍՐԱՊ.— Երկուք ալ ինծմէ առ։

ՓՈՂ.— Մէկ էլ ինձանից։

ՃՕՆ.— Ինծմէ ալ երկու։

ԹՆԿՌ.— Ծառայականս ալ իրեք ծան ունիմ. (երկու թուղթ կուտայ)։

ԲԻԷՌ (Թնկռիկին թուղթերը նշդելով).— Ուրիշ ձայն չունի՞ս, Պ. Թնկռիկ։

ԹՆԿՌ.— Նեղուէ իր վիւրիւշ ծանէլլէ (Կըխնդայ)։

ԲԻԷԹ.— Բայց տուած ձայներդ երկու հատ են, ո՞ւր է միւսը։

ԹՆԿԹ.— Մէկալն ալ ես եմ. (կը խնդան)։

ՓՈՂ (Զանգակը հնչեցնելով).— Պ. Բիէթ, խնդրում եմ կարդացէք ձայները, ժամանակը անցնում է։

ԲԻԷԹ (Կարդալով).— «Յարգելի Վարչութիւն Հայ Նուագախումբի.— Այս երեկոյ ուրիշ ժողովի մը մասնակցած ըլլալով, ձայնս կուտամ Պ. Փողչունիին։»

Ստորագրուած՝ Գառնիկ Հայրապետեան

ԾՕՆ (Հեգնական).— Պ. Հայրապետեան այնքան պարտաճանաչ է որ ուրիշ ժողովները մարմնով, իսկ մեր ժողովին իր ձայնով կը մասնակցի (կը խնդան)։

ԲԻԷԹ.— «Պատուարժան Վարչութիւն Հայ Նուագախումբի», (Ինքնիրեն.— Եթէ բան մ'ալ չըրինք, գոնէ պատուի արժանացանք ա՛։ (Շարունակելով) «Այսօր հիւր ունենալուս պատճառաւ ժողովի ներկայ չպիտի կրնամ ըլլալ։ Ձայնս Պ. Սրափիոնին կուտամ։

Ստորագրուած՝ Օհաննէս Տէր Նահապետեան»

ԾՕՆ (Հեգնական).— Կ'երեւի Պ. Նահապետեան «Ազգային Սրահ»ի մէջ թէյասեղան մը պիտի տայ։

ԲԻԷԹ.— «Պատուարժան Վարչութիւն Հայ Նուագախումբի. Անակնկալի մը պատճառաւ, ստիպուած եմ ձայնս Պ. Սրափիոնի տալ։ Սարկաւագենց Կոզմոզ»։

ԾՕՆ.— Անակնկալ բառը այս երեկոյեան ժողովի չի գալն է։

ԲԻԷԹ.— «Պատուարժան Վարչութիւն. Սենեակիս փոխադրութեան պատճառաւ, ձայնս կուտամ Պ. Ծօնին։ Լուսարարենց Քէնարիօս»։

ՍՐԱՊ.— Արդէն սենեակին մէջ ունեցածը մինակ գիշերուան հագած զգեստն է, որ ամէն ատեն հագնելով կը փոխադրէ։

ԹՆԿԹ.— Պ. Բիէթ, տուէք մինակ ալի անունները կարդացէք, ըս տեսակ պատճառները ըմփին ատեն կու լսինք։



ՓՈՂ.— Ո՛չ, դա ապօրինի է, անհրաժեշտ է կարդալ։

ԲԻԷԹ.— «Պատուարժան Վարչութիւն. Զաւակս քիչ մը տկար ըլլալուն համար, պարտաւորուած եմ զայն դարմանել, հետեւաբար ձայնս կուտամ Պ. Բիէթին։ Ժամկոչենց Փիլիպպոս։»

ՍՐԱՊ (Հեգնական).— Անիկա ժամանակին ախտէրութիւն ըրած է, ատոր համար բժշկութենէ կը հասկնայ (կը խնդան)։

ՓՈՂ (Զանգակ).— Խնդրում եմ մի՛ ընդմիջէք։

ԲԻԷԹ.— Պատուարժան Վարչութիւն. Տիկինը քիչ մը անհանգիստ ըլլալուն, ժողովի չպիտի կրնամ գալ։ Ձայնս Պ. Ծօնին կուտամ։ (Մեկուսի).— (Տիկնոջ հետ ալ առանց ձայնի պիտի խօսի)։ (Կարդալով) Բիւզանդ Տիրատուրեան»։

«Պատուարժան Վարչութիւն. Կոկորդս ցաւելուն պատճառաւ ձայնս Պ. Բիէթին կուտամ։ Իգնատիոս Ասվածատուրեան»։ (Մեկուսի) Պատճառը շատ բանաւոր է։

«Պատուարժան Վարչութիւն. Ակռայի ցաւի պատճառաւ ձայնս կուտամ Պ. Թնկլիկին։ Գալուստ Քրիստոսատուրեան»։

ԾՕՆ.— Արդէն անիկա մինչեւ ակռայի ցաւ ունի։ (Կը խնդան)։

ՓՈՂ (Զանգակ).— Խնդրում եմ խաղմաղալ մի անէք։ Պ. Բիէթ, հարկ է շարունակել։

(Հեռաձայնի զանգակը կը հնչէ)

ԲԻԷԹ.— «Պատուարժան Վարչութիւն. Հօրս արեան բորբոքման պատճառաւ. ձայնս կուտամ Թնկլիկին։ Աթթար Խաչատուրեան»։

(Գոլերայի ատեն իսկ այսքան հիւանդ չըլլար, բարեբախտաբար մեռնող չկայ։ (Ձայները համրելով) Մէկ... երկու...

ՄԻՋՕ (Վազելով հեռաձայնին գլուխը կ'անցնի)։
— Ալօ՛, ալօ՛... ո՞վ կ'ուզէք... Հայ Նուագախումբի վարչութի՞ւնը... հո՛ս է... միւսիւ Բիէռն ալ հոս է... լաւ, լաւ...



ՄԻՋՕ (ԱՐՕՅԵԱՆ) ՃՕՆ (ԱՆԱՆԵԱՆ) ՓՈՂՋՈՒՆԻ (ԱՒԱԳԵԱՆ) ԲԻԷՌ (ԳԱԲԱՔՃԵԱՆ) ՍՐԱՊԻՈՆ (ՕԺԱՆԵԱՆ) ԹՆԿՈՒԿ (ՄԿՐՏԻՉԵԱՆ)

ՄԻՋՕ. — Միւսիւ Բիէռն ալ հոս է...



ԲԻԷՌ (անակնկալօրէն, Միջօին). — Միւսիւ Բիէռը՞։

ՄԻՋՕ. — Այո, ձեզ հետ խօսիլ կ'ուզեն (սուրճի եւ հանգստապատառի սպասները կ'առնէ ու կը մեկնի)։

ԲԻԷՌ (անմիջապէս խօսիլ կը սկսի). — Ալօ՛, ալօ՛, ո՞վ էք դուք, հա՛... (հեգնական) ի՞նչպէս էք, Պ. Կարկուտ, հիւանդ չէ՞ք ա, այսինքն հրապարակի վըրայ շատ հիւանդութիւն կայ անոր համար... Ներողութիւն, ի՞նչ կ'ուզէք, լա՛ւ, լա՛ւ, գիշեր բարի... (տեղը կը նստի)։

ՓՈՂ. — Ի՞նչ է ասում։

ԲԻԷՌ — Գիշերը պէտի աշխատի եղեր, ձայնը Թնկուիկին կուտայ։ (Հեգնական) Կ'երեւի թէ անձայն, անշշուկ պիտի աշխատի։

ԹՆԿՈ. — Երկու ժամ առաջ հրամանքը հէյկական սիւրճարանին մէջ պիլիարտօ կու խաղար, վէօզ գիտէ թը ի՞չ կատու չան տլլութեան էշխէտիւթիւն ալ անէ։

(Հեռաձայնի զանգակը կը հնչէ)

ԲԻԷՌ (շուտափոյթ հեռաձայնին մօտենալով). — Ալօ, ալօ, ի՞նչ կ'ուզէք, ես Բիէռն եմ, դուք ո՞վ էք, հա, (հեգնական) արդէն անցեալ ժողովին ներած էինք անոր... Խնդրեմ, խօսքերնիդ շատ վերջացուցէք... ո՞ր ոտքը կոտրեցաւ... պայտարին տարէք... հա՛, ներողութ... Համբարձումին տարէք... Ես ալ շատ կը ցաւիմ, անցած ըլլայ, գիշեր բարի (ընկերներուն մօտենալով) Երանի թէ առաջուընէ ոտքը կոտրէր, ընկերութեան չմասնակցէր։

ՓՈՂ. — Ո՞վ է խօսում։

ԲԻԷՌ. — Մեր Պ. Փայլակին մօրաքրոջ տղան։

ԹՆԿՈ. — Էնի մօրքուր չունի ա՛։

ԲԻԷՌ (ծիծաղելով, խորհրդաւոր). — Դուն չես գիտեր։

ՓՈՂ. (նեղնական).— Մօրաքրոջ տղան ի՞նչ է խօսում։

ԲԻԷՌ.— Պ. Փայլակ իր ձայնը մօրաքրոջ տղուն միջոցաւ Պ. Թնկուիկին կուտայ, որովհետեւ այս առաւօտ թրամվայէն ինկեր ոտքը կոտրեր է։

ԹՆԿՌ.— Թէօղ տունը նուստի մէօրը վէստուկէծ դիրէմն բաւէ։

ԾՕՆ.— Պ. Փայլակ իր ձայնը մօրաքրոջ տղուն կուտայ, մօրաքրոջ տղան՝ հեռաձայնին, հեռաձայնը՝ Թնկուիկին, և Թնկուիկն ալ ժողովին։ Զեմ գիտեր թէ այս կերպով ի՞նչ գործ յառաջ կուգայ։

ՓՈՂ (զանգակ, Բիէռին).— Դէ՛հ, գործի սկսինք։

ԲԻԷՌ.— Լաւ. (հազիւ նստելու կ'ըլլայ, հեռաձայնի զանգակը կը հնչէ. անմիջապէս կ'սկսի խօսիլ) Ալօ՛... Ալօ՛... ես Բիէռն եմ... բարի առաքեցար Պ. Շնորհք. շնորհակալ եմ... Ընկերութեան գործե՞րը... Եթէ անդամները շնորհքով գործէին, լաւ կ'ըլլար... Նորէ՞ն ժողովի չպիտի կրնաք գալ. ձեզի ի՞նչ դժբաղդութիւն պատահեցաւ... Եթէ այս պահուս գործ չունենայինք, մենք ալ ձեզի պէս կը վայելէինք հայկական հանդէսը... Գիշեր բարի...

ԾՕՆ (ժմծիծաղով).—Կարծեմ ատկէց վերջ մենք ալ գործ չենք ունենար և իրեն պէս կը վայելենք հանդէսները։

ՓՈՂ (զանգակ, Բիէռին).— Տեղդ նստիր, մեր գործին նայենք։

ԲԻԷՌ.— Պ. Փողչունի, քիչ մը եւս համբերէ, տեսնենք ուրիշ ի՞նչ ձայներ պիտի ելլեն։

(Հեռաձայնին զանգակը կը հնչէ)

ԲԻԷՌ.— Ալօ՛... ալօ՛... նոյն ինքն եմ. ի՞նչ կ'ուզես ծօ Ներսէս... Աղէկ եմ, սակայն ձեր մեծապատուութենէն կը խնդրեմ որ համի ձեւակերպութիւնները մէկ կողմ դնել և ինծի յայտնել թէ հիւա՞նդ



էք, թէ ոչ հայկական հանդէսին պիտի երթաք։ Այո՛, կը ներողեմ կոր, Ներսէս, որովհետեւ ես այստեղը գործ ընելու համար եկած եմ, ոչ թէ հեռաձայնով խօսելու։ Կը խնդրեմ, ըսէք ձեր պատճառը. անշուշտ, առանց ձեզի և ձեր նուագին տնար անունը չի տօնուիր։ Գիշեր բարի։

ԾՕՆ.— Ա՞ս ինչ ծամեց։

ԲԻԷՌ.— Այս երեկոյ Թաթաւլացի Եանիին իր մօրաքրոջը անունը տօնելու համար հրաւիրեր է մեր Պ. Ներսէսը, որպէսզի երեկոյթին մէջ բարեկամաբար նուագէ։

ԹՆԿՌ (յօրանջելով).— Ծառայականս էլ էնպէս կու կէրծէմ իւր մինք ալ ֆէօս ժօղվօնք ընելու հիրէվիրվէծ ինք։

ԲԻԷՌ (Թնկուիկին ակնարկելով).— Ինչպէս նաեւ յօրանջելու և քնանալու։

ԹՆԿՌ (անտարբեր).— Բինէցինէլիք խէօսքեր կուլլին էնօր հըմար։

ՓՈՂ (զանգակ).— Էլլի բաւական է, ժողովը շարունակենք Պ. Պիէռ, հաճո՞ւմ էք սեղանի գլուխ անցնիլ։

ԲԻԷՌ.— Բայց... (հեռաձայնը կը հնչէ). Ալօ՛, ալօ՛, ի՞նչ կ'ուզէք, այո՛, ես ինքս եմ, պարտաւոր եմ ձեզի մահիկ ընելու. իրա՞ւ կ'ըսէք. (նեղնական) կը մաղթեմ որ ձեր ապագայ նեցուկը ըլլայ նորածինը, նաեւ աշխարհի ամենամեծ երաժշտագէտը։ Հոգ չէ, հոգ չէ, գիշեր բարի։ (ընկերներուն) Իմացա՞ք, Յովսէփին զաւակ մը ծներ է։

ՄՐԱՊ. -- Հիմա տունը գայ։

ԹՆԿՌ.— Էտի իրբ կարգիլվեցաւ իւր։

ԲԻԷՌ (պալարուն).— Ջի հարցուցի։

ՓՈՂ (գրպանի ժամացոյցին նայելով).— Ընկերներ, ժամերը սահում են, վերջնականապէս ժողովը պէտք է շարունակել, տեսնենք թէ մեզանից ի՞նչ պիտի ծնուի։

ԲԻԺՌ .— Բայց դեռ դուրսը մեր անդամներէն Եուսուֆը ունինք, կարելի է հիմա ան ալ հեռաձայնով կը խօսի։

ԹՆԿՌ .— Անի հիմէյիկս կինովծայ, լեզվին բերնին մէօջ բռնված է, վէօչ հեռվըծանով կույնայ խէօսիլ էօվ վէօչ մէօտկըծանով։

ԲԻԺՌ (տեղը նստելով).— Ուրեմն ձայները ճշդենք ու ժողովը կանոնաւորապէս շարունակենք։

## ՏԵՍԻԼ Ջ.

### ՆՈՅՆՔ ԵՒ ԵՈՒՍՈՒՖ

ԵՈՒՍ (Գինով, Ֆեսը ձեռքը բռնած, հագին ներս մտած).— Կեցցէ՜ Նուագախումբը։

ԹՆԿՌ .— Կեցցէ՜ օղին։

ԵՈՒՍ .— Ի՞նչ է աս, մէջտեղը մարդ չկայ, ժողովը լմնցա՞ւ։

ՓՈՂ .— Ժողովի դեռ նոր սկսում ենք, իսկ ընկերները իրանց ձայները մեզ ուղարկել են։

ԵՈՒՍ .— Ատանկ ապօրինութի՞ւն կ'ըլլայ։

ԲԻԺՌ .— Եթէ դուն ալ ձայնդ ուղարկէիր աւելի լաւ կ'ըլլար։

ԵՈՒՍ .— Ի՞նչ պատճառաւ։

ԲԻԺՌ .— Այս գիշեր քեզի շատ անհանգիստ կը տեսնեմ, անոր համար։

ԾՕՆ .— Գնա տունդ պառկէ, հանգիստ ըրէ։

ՄՐԱՊ .— Կերեւի թէ նորէն մսած ես, գնա քանի մը հատ օղի խմէ և այնպէս պառկէ։

ԹՆԿՌ .— Շիտա գինա, գինետունը կիւ կէօցէն, էտքը էօղի չիս կըյնար։

ԵՈՒՍ (նեղուած).— Ես օղին դուրս խմեցի, որպէսզի չմսիմ, անհանգիստ չըլլամ և պառկելու ալ չի պարտաւորուիմ (կը նստի)։

ՓՈՂ (զանգակ).— Ընկերներ, ժողովը պէտք է շարունակել։



ԲԻԺՌ .— Հինգ հոգի ներկայ ենք. (ձայները համրելով) մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը. ինը ձայն ալ կ'ընէ տասնըչորս. (մտաբերելով) հինգ հատ ալ հեռաձայն՝ եղաւ 19. (Եուսուֆը ցոյց տալով) հատ մըն ալ բաղաձայն՝ 20։

ԵՈՒՍ (ինքնիրեն).— Բաղաձայնը ո՞վ է։

ԾՕՆ (հեգնական).— Այդ հաշուով մեծամասնութիւն կը կազմենք։

ՄՐԱՊ (հեգնական).— Անանկէ նէ կրնանք ընդհանուր ժողով ընել։

ԵՈՒՍ (մեկուսի).— Նոյն իսկ շրջանային ժողով կրնանք ընել։

ԹՆԿՌ (հեգնական).— Մըզի հիտ քուչէն հէտ ալ նիւվագներիւ ծէն ունինք կ'անէ ըմմէնքը քառսիւն, էվ թը վօր հարկ ալ լինի, կիյնանք քուսան ծէն ալ էրըվան հանել։

ՓՈՂ (զանգակ).— Ամէն պարագայում պէտք է վերջ տալ պոլոր խնտիրներին. (Բիժուին) կարելի՞ է արձանագրութիւնը կարդալ։

(Միջօ կը մտնէ եւ թէյին սպասը կ'առնէ)

ԵՈՒՍ .— Ինծի առանց շաքարի սուրճ մը բեր (սիկառ մը կը փաթթէ եւ կը ծխէ)։

ՄԻՋՕ .— Լաւ (կը մեկնի)։

ԲԻԺՌ (կարդալով).— 3 Յունվար 1900, Գահիրէ։ Հայ Նուագախումբի երրորդ ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ «Միջազգային սրճարան»ին մէջ, ժամը 9ին, ի ներկայութեան 10 անդամներու և մասնակցութեամբ 10 գրաւոր ձայներու։ Օրակարգն էր «Ընկերները օգնելու միջոց մը գտնել»։ Սակայն ներկաներու և ձայներու թիւը, կարծիքներու անհամաձայնութիւնը և օրակարգի կարեւորութիւնը ի նկատի առնելով, ժողովը չկրցաւ որոշ եզրակացութեան մը գալ, և ներկայ ամսոյ 9ին գումարուելիք նիստին մէջ

օրակարգը անպայման սպառելու հաստատ մտադրութեամբ ժողովը փակուեցաւ ժամը 12ին։

ՓՈՂ.— Թէ չունէք մի դիտողութիւն, կարող էք ստորագրել։

(Կը ստորագրեն, ինչպէս նաեւ Եուսուֆը)

ԲԻՉՌ. Արդ, զբաղուինք անլուծելի օրակարգի հարցով՝ «Ընկերները ոգեւորելու միջոց խորհիլ»։

ԵՈՒՍ.— Ոգի խմցնելու է անոնց, բայց քիչ...

ՓՈՂ. (զանգակ)։

ՃՕՆ.— Մենք արդէն քիչ առաջ տատանուեցանք և չկրցանք միջոց մը գտնել։

ԹՆԿՌ.— Շունը քանի որսի չերթար կ'ըսեն։

ԵՈՒՍ.— Յամառ էշն ալ ճամբան քալած ատենը յանկարծ կը կենայ։

ԲԻՇՌ.— Ի՞նչ պէտք է ընել։

ԹՆԿՌ.— Մեր ձէյնէվոր էնդէմներուն կէմէցիւք մի վէօջ կիրը կու գունինք էվ կործերնիս կու նէյինք։

ՍՐԱՊ (քիչ մը անախորժ).— Է՛, պարապ խօսքերով ժամանակ կանցնենք կոր։

ԹՆԿՌ (սրտնեղ).— Ժամանակ անցնելն ի՞չ ճիվէրս ալլի։

ՍՐԱՊ (հեգնանքով, ժամացոյցը կը նայի).— Ըսել կ'ուզեմ որ ժամանակը ուշ է։

ԹՆԿՌ.— Ըսել կ'ուզես թը պէրէպ խէօսք կինէմ, ընպէ՞ս է։

ՍՐԱՊ.— Հարցնելդ աւելորդ է։

ԹՆԿՌ.— Քէնի վոր էտպէս է, էլ չիմ խէօսիր։

ԵՈՒՍ (ոտքի կանգնած՝ խոնարհելով).— Շա՛տ շնորհակալ ենք։

ՓՈՂ (զանգակ).— Մենք որ անդամները ոգեւորելու մասին մտածում ենք, դա այն պատճառաւ է որ առանց անդամներու ամբողջութեան չենք կարող գործը գլուխ հանել, հասկանո՞ւմ ես Պ. Թնկռիկ։

ԹՆԿՌ.— Ի՞չ պատճառ կայ քի գէօրծը գլուխ չիյտի կըյնենք հանել։



ԵՈՒՍ.— Այս մարդուն խօսք հասկցնելը շատ դժուար է։

ՃՕՆ.— Այն գլխաւոր պատճառաւ որ ամսական 5—10 ոսկիի ծախք մը կայ։

ԹՆԿՌ.— Ծառայականս ընպէս հէշիֆ կէնիմ իւր 300 ղրուշօք ըմմէն բան կու լումունայ։

ԵՈՒՍ (հեգնական).— Եւ դրամ ալ կ'աւելնայ։

ԹՆԿՌ (Եուսուֆի խօսքերէն չախորժելով, կռնակը անոր կը դարձնէ)։

ՃՕՆ.— Փափաքելի է որ այդ մանչելի հաշիւը մեզի ալ գիտցնես։

ԹՆԿՌ.— Եօթանասուն ղրուշ աշկէրտ-ուսունին, էռէսուն ղուռուշ ալ էշկէրտատան մէօջիւ վառելիւք ճիւրաքներուն, 200 ղուռուշ ալ վէյժէպէտուին լումունցաւ։

ԵՈՒՍ (հեգնական).— Անանկ է նէ վաղուընէ սկսեալ գործի սկսելու է։

ՃՕՆ (հեգնական).— Հայագործ Երանոս աղբա՞րը վարժապետ պիտի ընես։ Բարեկամս, այս քաղաքին մէջ 200 ղրուշնոց վարժապետը անտանելիութիւն իսկ չկրնար ընել, 70 ղրուշնոց տեղ՝ ալ դասարան չըլլար, ախոռ կ'ըլլայ, որուն մէջ (Թնկռիկը մատնանշելով) հազիւ մէկ երկու էշ կարելի է պահել, իսկ դասարանի մէջ միմիայն վառելիք ճրա՞գը հաշուի կ'առնես, առանց նկատելու որ այդ ճրագը վառելու համար լուցկիի պէտք ունիս, հայնագրութիւն սորվելու համար դասագիրքերու և տետրակներու պէտք ունիս, գործարանը մաքրելու և խմելու համար ջուրի պէտք ունիս, առանցմէ զատ բացառիկ ծախքեր ալ կան։

ՄԻՋՕ (սուրճը տալով).— Հրամմեցէք։

ԵՈՒՍ (դրամը տալով).— Դուն ալ աս հրամմէ։

ՓՈՂ.— Ենթադրենք հէնց թէ միայն ամսական 300 դահեկան բաւ լինի, մեր հինգերիս ժողովը կարո՞ղ է այդ ծախսը ապահովել։

ՃՕՆ.— *Եթէ իւրաքանչիւրս կարենանք ամսական 50 դահեկան վճարել, դարձեալ չի բաւեր։*

ԹՆԿՌ.— *Հըպա, դուք էօր իրէք հէրիւր ղուռուշ օյլման ճըյտը կըյնաք հանել նը, 8—10 էօսկին իւր տիլէն տի հանէիւք* (կը յօրանջէ)։

ԵՈՒՍ (Ամէն անգամ որ ուրիշները կը յօրանջեն, ինքն ալ անոնցմէ ազդուելով կը յօրանջէ)։

ՄՐԱԴ (Թնկուիկին ակնարկելով).— *Կլօխս ցաւից տկաւ։*

ԵՈՒՍ.— *Իմ գլուխս ալ աւելի տաքցաւ։*

ԹՆԿՌ (Արտնեղուած, արագօրէն համրիչը կը քաշէ)։

ՓՈՂ (զանգակ).— *Խումբը կազմուելուց առաջ արդէն այդ մասին տեսնուել էինք, մի քիչ նուագ գիտացող չափահասն ընկերների հետ, որոնք խոստացել էին համակիր երգիչներ ու նուագողներ ճարել և նրանց օժանդակութեամբ հանդէսներ սարքել։ Իսկ էսօր տեսնում ենք թէ նրանք միմիայն թղթի և հեռաձայնի միջից են դուրս գալիս։*

ԹՆԿՌ.— *Անանկը նէ վիւրիւշ խէօրհիւրդ տի տամ, տեսնեմ էսօր ինչ տի ուզէք։*

ՓՈՂ.— *Ասացէք տեսնամ։*

ԵՈՒՍ.— *Ճառեցէք տեսնեմ։*

ԹՆԿՌ.— *Ըստեղի հայ խումբագիրնէրիւն կ'ասինք, մէօր նիւվագախումբի ինկէրութեան համար քանի մը անգամ իրենց լիւրագիւրնէրին մէջ բարով մի կուգովին, յուսամ եմ թը ըս վէրպէտիւթէմը կու ցէջոգվինք խէլքը գլխուն մէօջ մէնչուկներ գըյնել։*

ՃՕՆ.— *Մինչեւ որ խնամի խմբագիրներ չունենաս, մեզի համար բան մը չեն գրեր։*

ԹՆԿՌ (քիչ մը նեղուած).— *Խնամին ին ըլլի, էնոնց պարտքն է իւր ըս տեսակ գէօրծէրիւ համար լիւրագիւրնէրիւն մէօջ գրին էվ ուժ տան։*

ՃՕՆ (հաստատօրէն).— *Տեղւոյս հայ թերթերը կը զբաղուին միայն խնամիական հաշիւներով* (բութամատն



ու ցուցամատը իրար շփելով) *և շահական յօդուածներով, շատ անգամ ալ իրարու հետ պայքարելով։*

ԵՈՒՍ.— *Եւ գօնեաք խմելով։*

ՄՐԱԴ (չորս կողմը դիտելէ վերջ).— *Կարճ կապեցէք, կրնայ ըլլալ որ խմբագիրները կ'իմանան, ետքը մեզի դէմ ալ կը պայքարին։*

ԲԻԼՌ.— *Փոխանակ թերթերով յայտարարելու, շրջաբերականներով կը յայտարարենք։*

ՓՈՂ.— *Չեմ կարծում որ թերթերու կամ շրջաբերականների հարկ լինի, մեր ընկեր խորհրդականը թէ՛ աղքատի լրագիր է և թէ շրջաբերական, նրա միջոցաւ աւելի լաւ կը յայտարարուի։*

ՄՐԱԴ.— *Ատ փորձը ըրի, արդիւնքը ներկայ վարչութիւնը եղաւ։*

ԹՆԿՌ (յօրանջելով, յուսահատօրէն).— *Մխալ ըրինք իւր գնթերնիս ըս տեսակ գէօրծէրիւ մէօջ խօթեցանք, օղորմած փէօքի հարըս, կենդանի աղօթքը բարեխօս, կ'ասէր իւր հէավէնց թմբկին ծէնը անուշ կ'ուլլի, մօտինաս նը կուլխիդ ցաւ կուլլի։*

ՓՈՂ (զանգակ).— *Ընկերներ, ուրիշ միջոց գիտէք ասէք։*

ԵՈՒՍ — *Պէտք է օղի խմողներէ կազմուի նուագախումբը որ յաջողուի, որովհետեւ փորձուած է թէ օղի խմողները կ'երգեն, կը նուագեն, մաիկ կ'ընեն, կը նշանակէ որ անոնք ճշմարիտ երաժշտագէտներ են։*

ՓՈՂ (կարեւորութիւն չտալով Եուսուֆի խօսքին, միւսներուն).— *Դուք աւելիք ունէ՞ք։*

ՃՕՆ.— *Իմ կարծիքով լաւ է որ ընկերութեան թաղումը կատարենք, մենք ալ ազատուինք։*

ԹՆԿՌ (յօրանջելով).— *Էվ էրթանք ժամը տիրացութիւն անինք, պէլքի փէօնտէղուկը նօթա սորվինք։*

ՄՐԱԴ.— *Անտեղն ալ սորվեցնող չկայ։*

ՓՈՂ (զանգակ).— *Ընկերնե՛ր, ինչպէս երեւում*

է, մինչեւ ցարդ չկարողացանք ոչ օրակարգի հարցը լուծել և ոչ էլ հինգ հոգւով գործը շարունակելու մասին որոշում մը տալ: Հետեւաբար ասել է թէ մենք անկարող ենք (կը յօրանջէ):

ԵՈՒՍ — Դո՛ւք անկարող էք և ուրիշներն ալ մոխիկ ընել չէք ուներ:

ԲԻԷՌ.— Օրակարգի խնդիրը առայժմ դժուարին կը գտնեմ, բայց գործը շարունակելու համար, վերջին անգամ ըլլալով միջոց մը պիտի առաջարկեմ:

ՄՐԱՊ.— Վերջին անգամ ըլլալով մենք ալ մոխիկ կ'ընենք:

ԵՈՒՍ.— Շիտակը ես մոխիկ չեմ կրնար ընել:

ԲԻԷՌ.— Հայ գերասանական խումբին դիմենք, ի նպաստ մեզի ներկայացում մը սարքելու համար:

ՄՐԱՊ.— Անոնք ամէնքն ալ խաչագողներ են:

ԲԻԷՌ.— Ի՞նչ ըրած են որ.

ԵՈՒՍ.— Ի՞նչ չըրած են որ:

ԹՈՒԿՌ (Կը սկսի ակամայօրէն մրափել, մերթ գլուխը իր աջին խոնարհելով, մերթ ուղղելով եւ մարմինը թուլցած ըլլալով, նախ հովհարիչը ձեռքէն գետին կ'իյնայ, յետոյ հովանոցը):

ՓՈՂ. (Մրափելու աստիճան թուլցած ըլլալով, մերթ գլուխը սեղանին կը խոնարհէ, բայց միշտ կ'ուղղէ):

ՄՐԱՊ.— Անգամ մը ներկայացում մը սարքած էին, արդէն 15 օր առաջ տոմսակները ծախել սկսելով դրամները կամաց կամաց կերած էին, ատոր համար ժամանակին չկրցին թատրոնին դուռը բանալ ալ: Տոմսակ առնողները որ եկած լեցուած էին, ներկայացումին տեղը այդ խայտառակութիւնը տեսան: Աս մէկ: Ուրիշ անգամ մըն ալ բարեգործական նպատակի մը համար հանդէս մը պիտի տրուէր, անոնց կը դիմուի, որպէսզի ազգասիրաբար զաւեշտով մը մասնակցին: Անոնք «շատ աղէկ» կ'ըսեն, բայց վերջին պա-



հուն երբ յայտարարութիւնները ելած էին, անոնք առանց ամչնալու 10 ոսկի ուզեցին, կանխիկ ըլլալու պայմանով: Ժողովուրդին առջեւ խայտառակ չըլլալու համար 10 ոսկին տրուեցաւ իրենց:

ՃՕՆ.— Անոնց մէջը Խաչի՛կ անունով մէկը կայ որ գերասանական խումբին մեծն է:

ՄՐԱՊ (պաղարիւն).— Խաչագողներուն մեծն է:

ԵՈՒՍ.— Ջրի օղի խմողներուն ալ մեծն է:

ՃՕՆ.— Այդ խաչագողներուն մենծը, օր մը երբ անօթի ճաշարանի մը առջեւէն կ'անցնէր, ներսը կը տեսնայ Պ. Ջուաներեանը որ կը ճաշէր, քովը կ'երթայ և մտերմաբար կը բարեւէ՝ ձեռքը թօթուելով: Ջուաներեան հաղիւ Աստուծոյ բարին, հրամմեցէք կ'ըսէ, ան կը նստի և աչքերը կանչելով կերակուր կ'ապսպրէ, և լաւ մը կշտանալէ յետոյ դուրսը թրամվային անցնիլը տեսնելով, «օ՜, ներողութիւն, վայրկեան մը» կ'ըսէ ու անմիջապէս թրամվայ ցատկելով կ'աներեւութանայ, սեղանին վրայ թողլով այն մեծ ծրարը որ ներս մտած ատենը հետը բերած էր ու հոն դրած: Բաւական մը վերջ Ջուաներեան այդ ծրարէն կասկածելով զայն ճաշարանապետին առջեւ կը բանայ: Այնտեղ միայն կը տեսնեն հին պատռած թերթերու կտորներ: Ջուաներեան որ կծծի մէկն էր քիչ կը մնայ որ կաթուածի ենթարկուէր, իր միամտութեամբ խաղցուած գոմէշին ապուշ հանդիսատեսը մնալէ զատ չի կերած կերակուրին փոխարէնն ալ կը վճարէ և թուղթի կտորները առնելով կը մեկնի, կարծես զանոնք պէտք եղած ատենը գործածելու համար...

ԵՈՒՍ (Թեւը Թեկուկին Ցեփին վրայ կը դնէ եւ կը սկսի մրափել՝ թեւը աթոռին եւ գլուխն ալ թեւին վրայ):

ՓՈՂ. (ամփոփուելով, զանգակ).— Նորից չեղում ենք...

ՄԻՋՕ (սպասները եւ կլկալը առնելով).— Պա-րոններ, սրճարանը գոցելու ժամանակը եկաւ:

ԲԻՇՌ (գլուխը շարժելով ցաւագին).— Իսկ մեր ժողովը գոցելու ժամանակը չեկաւ:

ՄԻՋՕ.— Վարպետս ըսաւ որ եթէ ժողովին շա-րունակել կ'ուզեն (մատը վերցնելով) թող մեր վերի պանդոկը փոխադրուին:

ՄՐԱՊ (ընկերներուն).— Ես կ'երթամ տունս կը փոխադրուիմ, ալուարիկ մըն ալ կը քնանամ:

ԾՕՆ (ընկերներուն).— Սրճարանի մէջ արդէն գիշերը կէս ըրինք, միւս կէսն ալ պանդոկի մէջ չեմ կրնար ընել:

ՄՐԱՊ.— Բնաւ մնանք նէ վաղ առտու պաշտօնի գլուխ չենք կրնար անցնիլ:

ԾՕՆ.— Եւ գործերնիս կը վնասուինք:

ԲԻՇՌ.— Եթէ կ'ուզէք վաղը երեկոյ ժողովը դարձեալ շարունակենք:

ՓՈՂ (մէկ ձեռքով աչքերը կը շփէ, միւսով զան-գակը կը հնչէ).— Մեր այսօրուայ չորրորդ ժողովում 20 անդամներից միայն հինգս ներկայ եղանք և չկա-րողացանք մի եզրակացութեան հասնել: Թերևս վաղ-ուայ ժողովում ներկաներս էլ բացակայողներ լինենք ու այն ատեն չկարողանանք վարչական ժողով իսկ անել: Ուստի Պ. Ծօնին նման ինքս էլ յարմար եմ տեսնում ընկերութիւնը կազմալուծել, ո՛վ որ համա-միտ է թող մատ բարձրացնի:

(Միջօ սպասները առնելով կը մեկնի):

ԱՄԷՆՔԸ (մատ բարձրացնելով).— Այո՛, այո՛, պէտք է կազմալուծել:

ՓՈՂ.— Թնկոռիկը քնում է, պէտք է նրան ար-թնցնել և կարծիքը առնել:

ՄՐԱՊ.— Զգէ՛, թող քնանայ, երկու խօսք պա-կաս կ'ըլլայ:



ԲԻՇՌ.— Արդէն մեծամասնութիւն կը կազմենք:

ՓՈՂ (զանգակ).— Ընկերնե՛ր, ինչպէս գիտէք, ընկերութեան սնտուկում 27 դահեկան և 7ուկէս միլլիմ կայ, ըստ կանոնագրի մնում է մեզ որոշել թէ այդ հրաշալի գումարը բարենպատակ ընկերութիւններից ո՛ր մէկին պէտք է նուիրել:

ԲԻՇՌ.— Լաւ կ'ըլլայ որ կուսակցութեան տրուի:

ՄՐԱՊ.— Չէ՛, չէ՛, չէ՛, ես հակառակ եմ այդ մտածումին, կուսակցականները աւազակներ են:

ՓՈՂ.— (Զանգակ).

ԲԻՇՌ.— Կուսակցականները աւազա՞կ... աւա-զակ ձեզի պէս մարդիկներն են:

ՄՐԱՊ (կը ցցուի, ոտքի ելլելու շարժումներ կ'ընէ). — Մեզի պէ՞ս մը կ'ըլլան, շուտ խօսքդ ետ առ:

ԲԻՇՌ (Ոտքի կ'ելլէ, աթոռ բարձրացնելով).— Ան-պիտան, ետ առ խօսքդ:

ՓՈՂ.— (Բիշռը արգիլել կը ջանայ):

ՄԻՋՕ.— (Հապճեպով բեմ կուգայ, պարապ ա-թոռները կը հեռացնէ):

ԾՕՆ.— (Հանդարտօրէն զանգակը կը զարնէ որպէս զի խռովութիւնը դադրի):

ՄՐԱՊ.— (Բիշռին վրայ յարձակելու կ'ըլլայ, սա-կայն ոտքը աթոռին դպելով կը սահի, Թնկոռիկին վրայ կ'իյնայ, երկուքը մէկ գետին կը փռուին, քիթը կ'արիւ-նի, թաշկինակը կը բռնէ:

ԹՆԿՌ (Ընդոստ կ'ելլէ, գլուխը ձեռքերուն մէջ բռնելով, բարձրաձայն.— Օգնութի՜ւն, օգնութի՜ւն... գլուխս կը պատռին:

ՓՈՂ.— Սթափիր եղբայր, կատակ են անում:

ԹՆԿՌ.— Օգնութի՜ւն:

ՓՈՂ.— Ոստիկանները երբ լսեն, մեր բանը բուրդ է:



ՄԻՋՕ (ԱԲՕՅԵԱՆ) ՃՕՆ (ԱՆԱՆԵԱՆ) ԲԻԷՌ (ԳԱԲԱՔՃԵԱՆ) ՓՈՂՋՈՒՆԻ (ԱՒԱԳԵԱՆ)
ՍՐԱՊԻՈՆ (ՕԶԱՆԵԱՆ) ԹՆԿՌԻԿ (ՄԿՐՏԻՉԵԱՆ) ԵՈՒՍՈՒՖ (ԱՐԾՐՈՒՆԻ)

— Օգնութի՜ւն..., օգնութիւն...



ԹՆԿՌ. (Բարկութեամբ կօշիկները կը հագնի որ մեկնի, բայց անապարանօք աջ ոտքի կօշիկը ձախը կը հագնի, յետոյ կ'ուղղէ)։

ԵՈՒՍ (սթափելով, Թնկռիկին).— Ի՞նչ կը պոռաս կոր պէ՛, ձգէ քնանամ, առտուն կանուխ գործի պիտի երթամ. (չաքէքին օձիքը գլխուն կը քաշէ, կը քնանայ կծկուելով)։

ԹՆԿՌ.— Ընկլիջ վէօրջ գնթալս նուագ տի զարնեմ, պանտա մուզիքայի մէօջ չիտի մնամ. (համրիչը եւ հովանոցը գետնէն կ'առնէ, Միջօին կը վճարէ կը մեկնի։

ՃՕՆ (զանգակ, մեկնելու պատրաստուելով).— Ես կ'առաջարկեմ որ ընկերութեան հոգեհանգիստը կատարելու համար յառաջիկայ կիրակի Բոտ-էլ-Ֆարահ երթանք, անոր ժառանգով գարեջուր խմենք։

ՓՈՂ. (վճարելով).— Ես առաջարկում եմ որ դըրամը Որբանոցի տանք։

ԲԻԷՌ.— Լաւ, թող այդպէս ըլլայ։

ՃՕՆ.— Ես համամիտ եմ։

ՍՐԱՊ (վճարելով).— Ես համամիտ չեմ։

ՓՈՂ.— Պ. Սրապիոն, օրէնքը պահանջում է որ մեծամասնութեան հետեւես։ Ուրեմն ժողովը փակուած հաշւում եմ. (Նուաուֆին թեւը մտած կը մեկնի, միւսներն ալ տխուր վիճակի մէջ կը հետեւին իրեն)։

ՄԻՋՕ (ցաւագին).— Ինչ եղաւ նէ մեզի եղաւ, քանի մը ղրուշնին կ'առնէինք կոր...։

1/3 գր.

## ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

ՎԱՇԽԱՌՈՒՆ

ՁԿՆՈՐՍ ՁԱՔԱՐ — ԳԻՆ 5 ԴՀԿՆ

ՄԵՐ ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐԸ

ԽԱՆ-ԽԱԼԻԼԻ ՈՍԿԵՐԻՉՆԵՐԸ

ՍԱՓՐԻՉԸ

ՀԱՅ ՀԵՏԱՁՈՏԻՉՆԵՐԸ

ՀՍՎԻՒՆԵՐԸ

ԱՒԱԶԱԿԱՊԵՏԸ

ԲԱԲԵԼ ԱՂԱ

ՀՀ Ազգային գրադարան
NL0336516

44435